

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Հեղատեսակ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ


(2 քիւ մեկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Հեղատեսակ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Հեղատեսակ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տղը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԽՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

N A (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չիւ տրուիր

Չատկական տօներու առթիւ
յառաջիկայի շրթեղարթի օր «Ի-
րաւունք» պիտի չհրատարակուի:

ԹՈՒՐԲԸ ԻՐ ԴԵՐԻՆ ՄԵՋ

Ահա ներկայ թուով կը վերջա
նայ Մշոյ Տեղապահ Բաբկէն վար
դապետի տեղեկագիրը Մշոյ վի-
ճակի մասին: Տեղեկագիրը արդէն
ըստ ինքեան շատ պարզ և մեկին
է. այսինքն թիւրքը միշտ իր դե-
րին մէջ, հայ տարրը հայաստա-
նէն ջնջելու համար, եւ այս ծը-
րագիրը նոր չէ, համարի գահա-
կալութենէն աւելի հին է: Ով որ
կարդացած է ասկէ չուրջ 35 տա-
րիներ առաջ, խորմեան Պատրիար-
քի Դրան մատուցած տեղեկագիրը,
մեծ տարբերութիւն մը պիտի չը
գտնէ Բաբկէնի այսօրուան տեղե-
կագրէն. եղած փոքր տարբերու-
թիւնն ալ սա է, որ այսօր թուրք
կառավարութիւնը հայերը ջնջելով
հանդերձ Եւրոպայի առջեւ արդա-
րանալու համար պատրուակ մը
աւելի ունի, «յեղափոխականներ
կան կամ յեղափոխականներ էին»:
Մինչդեռ Բաբկէն վարդապետի
պաշտօնակարութենէն ի վեր Մշոյ
մէջ իսկապէս յեղափոխական դէպք
մը չէ պատահած, սակայն թուր-
քը միշտ իր հին ծրագիրն է որ
կը գործադրէ, և կը մաղթէ որ
հայերը պատճառներ տան որ մե-
ծաքանակ ջարդէ ու արդարացու
մըն ալ իր հետն ունենայ:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՋ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԵՋ

ԲԱԲԿԷՆ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԵՂԵԿԱԳՐԷՆ

(Շար. նախորդ քուէն եւ վերջ)

Ժ. Տեղափոխութիւն բաւը
կամ պատրուակ մեծ հարուած մը
կուտայ Ժողովուրդին որ կը փճա-
նայ ու անձկութեանց կը մատնուի
ոչ միայն կառավարութեան պաշ-
տօնեաներէն, այլ նաեւ քիւրտերու
և թուրքերու կողմէ. կը յաջորին
յեղափոխութիւն բաւը իրենց շա-
հուն գործածել, Դիրքի տէր ա-

մեն հայ յեղափոխականի սխալ
ամբաստանութեան կենթարկուի,
կը խոշտանգուի, կը կողոպտուի,
կ'սպաննուի կամ բանտարկուելով,
հազիւ թէ, տարիներ վերջը, չը-
քաւոր վիճակի մէջ ազատութիւն
կը գտնէ, որպէսզի իրեն ուշիւ մը
յաջորդէ. այսպէս բանտերը միշտ
հայերով լեցուն են, հայը յիշա-
փոխական չըլլալուն համար բողո-
շոքելու իրաւունք չունի. տեղէ մը
ուրիշ տեղ երթալու համար անցա-
գիր չի կրնար ստանալ, հետեւա-
պէս ամեն մարդ բանտարկուածի
պէս է. զէնք կրելը բացէ ի բաց
արգիւտած է, մինչ բոլոր միւս շի-
մաններու կարտօնուի: Հայ գիւղե-
րու մէջ, յեղափոխականներու մուտ-
քը արգիւտելու պատրուակաւ, ա-
ւարառու քիւրտեր կը գնեն, որ-
պէսզի հայ Ժողովուրդը իրենց
շահու աղբիւր մը ըլլայ, Մուշի
նահանգը միշտ յեղափոխականնե-
րով լեցուն ցոյց կուտան, մինչ
իր հացը հազիւ հանող յուսահատ
հայը, ատոր վրայ չի մտածեր
իսկ: Այս վերջին տարիներս, յե-
ղափոխականներ ձերբակալու պա-
տրուակով, հետեւեալ գիւղերը
յարձակմանց, աւարառութեանց ու
սպաննութեանց մատնուեցան. Զի-
րոնկ, Բերդակ, Արագ, Թեք-
վանք, Սուլուք, Քիլիքաշ, Կե-
լիկուզան, Էլկարդ, Չօրէք, Սպահանք
որ հիմնայատակ կոր-
ծանեցաւ:

Ժ. Երբ իւրաքանչիւր գիւղի
տուրքը գանձելու համար հարկա-
հաւաք մը բաւական է, ըստ սո-
վորութեան, 10էն 15 հոգի, մեծա-
գոյն մասը ձիաւոր, կը գտնուին.
Խմբովին գիւղերը կերթան, ու
հաւաքիչներու պէս իրենց ձիւրուն
ու իրենց սնունդը հէգ հայ գիւ-
ղացիներէն կընդունին, Ընդհան-
րապէս, գիւղերով գիւղերը կը մըտ-
նեն, տուններուն վրայ կը յարձա-
կին, գուռները կը խորտակեն ու
պատրաստ գրամ չունեցողները,
կին, այր, ծեր կամ որբ, ախոռ-
ներու մէջ կը բանտարկեն, գա-
նոնք կը խոշտանգեն, սիւներու
կը կապեն ու կը գանակոծեն:
Պաշտօնական հարկահաւաքներէ
կատ, կառավարութեան պաշտօն-

եաները, զինուորները, ոստիկան-
ներն ալ հարկահաւաքութիւն կը-
նեն, երբ կառավարութենէն առ-
նելիք ունին, ու իրենց առնելիք-
ներու ի փոխարէն, գիւղերու վը-
րայ հրամանագիրներ ունին, Ուղած
գիւղերին կը մտնեն, ու իրենց
համար ամեն բան ձրի է:

Ժ. Քիւրտերու հայերուն կրել
տուած շարժարանքը արդէն հան-
րայայտ է. մանաւանդ այս վեր-
ջին տարիներս կազմակերպեալ ձեւ
մը անոնք ստացան, վասնզի բոլոր
բարբարոսութիւնները կը կատար-
ուին առանց պատասխանատուու-
թեան և առանց արգելքի: Իւրա-
քանչիւր հայ գիւղի մէջ քիւրտ
աղաներ դրին որոնք անձնապէս
հոտ հաստատուեցան կամ իրենց
ստորադասեալները զրկեցին. կա-
րելի չէ հայ գիւղ մը գտնել ուր
միւս շիմաներ չըլլան, իրենց ա-
ռաջին զբաղումը հայերուն տունն
ըն ու արտերը գրաւել եղաւ, քա-
նի որ այդ բանին համար ամեն
կիրպ գիւղերով ինքներ ու միջոցնե-
րուն: Հայ գիւղերու աղաները,
իրենց արքանեակները ու ուսուս-
տները բռնութեամբ իրենց ամեն
ուղածը կատանան ու ի փոխարէն
բան մը չեն վճարիր. դէմ դնողնե-
րը կ'սպաննուին, հայերը աղանե-
րուն արտերը, գերիներու պէս կը
մշակեն, ծառերը կը կտրտեն ու
հունձքը կը վարեն: Հայ կիներու
ու աղջիկներու լկուռները ու հա-
փափուռները ծանօթ իրողութիւն
ներ են. այժմ աւելի շատ են, վա-
սնդի գիւղեր ցորեկ դուռները խոր-
տակելով ամեն տուն կը մտնեն,
ու անարգել ամեն չարագործո-
թիւն կընեն: Հունձքի ատենը գա-
լուն պէս, քիւրտերը հայերուն
արտերուն վրայ կը թափին, ցո-
րենի խուրձերը կ'առնեն կը տա-
նին ու մինչ սրայի դէզը կը չա-
փեն, բռնութեամբ «կալմաստ» ը-
սուած տուրքը կը գանձեն: Քիւրտ
գիւղերու սահմանակից հայ գիւղա-
ցիներու զրկանքը ու թալլումը ա-
ւելի ծանր են: Քիւրտերը հայ
սահմանագիծը կանցնին, հայերու
արտերուն տրտադրութիւնը կ'առ-
նեն, մշակուած արտերը կ'առնեն
ու կը փճացնեն, մէկ բաւոյ Քիւր

տերուն համար հայերը կողոպտե-
լը ու զանոնք փճացնելը պարտա-
կանութիւն մ'է, իրերու այս ըն-
թացքին բերմամբ, Սուրբ Կարա-
պետ վանքին մօտը գտնուող Մէջ
տի, Պակլուն, Բայպան գիւղերը
դատապարտուած են ապրեցնելու
Մէջմէտ Ալի աւազակապետը, ա-
նոր եղբորորդին Արապը, ու հօր-
եղբորորդին Տափակը ու ասոնց
սպասուորները. Գէյպան գիւղը
100 ոսկի փրկանք կը վճարէ, ու
Մէջտի ու Պակլան գիւղերէն իւ-
րաքանչիւրը 50 ոսկի: Քիւրտերը,
իրենց սովորական կեղեքումներէն
զատ, խուճեր կ'ազմած, անվախ
արտերը ու լեռները կ'աւարեն,
կ'արաւանները ու անցորդները կը
կողոպտին, ոչխարները ու անա-
ռուները կը տանին. աւազակնե-
րու այդ հրոսները թալլեցին Ցի-
րոնք ու Աւազակը գիւղերը,
ինչպէս Աղբերակ, Սուրբ Մատ-
նավանք և Սուրբ Աստուածածին
վանքերը: Սասունի Չիգէնք գիւ-
ղը բոլոր տուններով հրդեհուեցաւ,
կէլիկուզան, Էլկարդ, Չօրէք,
Սպահանք գիւղերը բոլորովին կոր-
ծանեցան: Աղբեր, Քիլիքաշ, Կե-
լիքեվէտին գիւղերուն անասուն-
ները քշուեցան: Մշոյ դաշտէն հե-
տեւեալ գիւղերը, Չիկուշ, Կոնրա-
վո, Ավրամ, Գոմս, Ալիճան, Բեր-
դաք, Ուրաք, Արվարինչ, Ար-
տոնք, Վարդենիս, Հարց, Պօսդա-
քէնտ, Խասքէօյ, Նորչէն, Հափա-
տօրիք ամենքն ալ թալլուեցան:

Ժ. Սասունի ու Մուշի նա-
հանգին հայերը քիւրտ աղաներուն
«քեաֆիւրիք» ըսուած մասնաւոր
տուրք մ'ալ վճարելու ստիպուած
են: Այդ աղաները նահանգը չըր-
ջանակներու ստորաբաժնած են,
ու այս շրջանակները նոյն տուրքը
կը վճարեն այն ցեղապետին որուն
ազդեցութեանը կամ բռնակալու-
թեանը ենթարկուած են: Կառա-
վարական տուրքերուն պէս, այս
տուրքը կը փոփոխուի, ու անվը-
րկա կը գանձուի. այս տուրքը
գանձող ցեղերը Քիւրտ, Քուրք ու
Պօգիկը ըսուածներն են. ահա
գանձման կէտքը: Սասունի Առա-
քելոց վանքը, Տարին, կուտայ
20 ոչխար, 20 լիտր իւղ, ու 1200

զընէ աւելի: Բարեկեցիկ նկատուած տուն մը, 7էն 10 ոչխար, 5-600 զըն. 5էն 6 օխտ բուրդ, սովորական տուն մը 3էն 4 ոչխար ու 100-200 զըն. իւր, բուրդ եւն: Ամուսնութեանց համար, «քիւֆի» լիք: Ըսուած մասնաւոր տուրք մ'աւելը վճարուի ու այդ աղաները չեն մտնում ամեն բան գրանցելու, ու գործարար, մանաւանդ կուսակցութեան աստացումքին պաշտօնեաներուն հետ համախորհուրդ, նեն գաժէտ միջոցներով, հայերը իրենց աստացումքներէն կը զրկեն ու զանոնք կիրառեն: Քիւրտ ցեղապետները իրենց մէջ կը ծախեն ու կը գնեն: Հայերը գերիներ են ու ինչ որ աւելի ողբերգական է, սա է որ երբ ցեղապետ մը թալլէ ու սպաննէ ուրիշ ցեղապետի մը շրջանակին հայերը, այդ ցեղապետն ալ իր կարգին միւս շրջանակին հայերու վրայ կը յարձակի ու զանոնք կը կոտորէ, այնպէս որ միշտ հայն է զոհ եղողը: Սասունի Չիգէնք գիւղին հայերը իրենց հողերը աղաներուն տալ չուզեցին, բայց աւաղակներու հըրոս մը այդ գիւղը համախուժելով, կրակի տուաւ տունները, ամեն բան կործանեց ու գիւղէն 5 երեսները սպաննելով, դիակները գետը նետեց և երկու ուրիշներ վիրաւորեց. բնակիչները ցրուեցան ու գիւղը հիմնայաւոր կործանեցաւ: Այս տարի ալ, Սպահանք գիւղը բոլորովին ոչնչացաւ, զեկոցուած կոտորածէն:

Ի. Այժմ սպաննութիւնները սովորական են, ու համաճարակի տարածութիւններ կանոն. բացի ջարդերու ատեն եղած սպաննութիւններէն, տարուան մը մէջ, Սուլի ձորին ու գիւղերուն մէջ, 100 հոգի սպաննուեցան և 11 վիրաւորուեցան: Իրենց անտաճած ծանօթ են ու ի հարկին ցանկը կարելի է տալ:

Սուլի Առաջն. Տիգրայտհ
Բարեկէն վարդապետ

ԿԵՂԵԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ՇՈՒՐՁԸ

ՍՊԱՌԱՂԻՔԻ ՄԸ ԱՌԹԻՒ

Նախորդ յօդուածի մը մէջ, խօսելով Դաշնակցութեան Պօստիի ներկայացուցիչ Ա. Վառլանի ան. յաջող փորձերուն վրայ, վերկ. Հնչակեաններու կողմէ Ուստրի մէջ գումարուած Համաժողովը խանգարելու համար, ժողովուրդէն հեգնուելու ու տեղւոյն դատարանէն — ուր դիմած էր անվայել արարք մը Հնչ. կուսակցութեան վերագրելու համար — փառաւորապէս արտաքսուելը, կաւելցնէ թէ Հնչ. վերկ. կուսակցութիւնը ոչ միայն իրեն հայ եկեղեցականութիւնն ալ համախորհուրդ ունեւնալով, համաժողովին գումարուած յաջողութեամբ է, առժամայն Յանձնախումբին կողմէ «Բք» Ար

մենի»-ի ի նպաստ հանգանակու. թիւնն ալ, հակառակ վառմանի մոլեգին նախաձիւն, արդիւնարար եղած է, այլ, վերկ. Հնչ. կուսակցութիւնը, ժողովուրդին մէջ վառմանի զգուշի ընթացքին հետեւանքով, Դաշնակցութեան դէմ գոյացած հակակրօնքէն օգտուելու չափ ճարպիկ փրկելով, հայաշատ քաղաքներու մէջ տնքնդհատ հրապարակային ժողովներ կը կազմակերպէ, յեղափոխութեան, որբերու, բանտարկուածներու ինպաստ հանգանակութեանց կը ձեռնարկէ, այսինքն Դաշնակցական ներկայացուցիչին ճիգերը աւելի Հնչ. կուսակցութեան գործունէութեան նպաստեց բան մնասց. Աւելորդ է ըսել որ վառմանն այս դասէն չխրատուելէ զատ, սկսած է աւելի ևս զայրագնութեամբ Հնչակեանք դէմ պայքար մղել — եթէ կրնանք պայքար անունը տալ Հնչ. Մասնաճիւղին բոլոր անդամները խաչագող, դաւաճան անուանելու, «Բք» Արմենի»-ի ի նպաստ եղած ժողովուրդային հանգանակութիւնը, Հնչակեանց կողմէ գումարուած Համաժողովէն կարգուած Յանձնախումբին նախաձեռնութեամբ, գործունէ հռչակել — խեղճը վերկին ատեններս Ամերիկայի հայ եկեղեցականներուն, ինչպէս Սարգսեան Սրբազանի անուններն ալ սկսաւ իր հայհոյանքներուն մէջ յիշատակել, Սատրի Համաժողովին մասնակցած ըլլալուն համար. ընդհակառակը Սարգսեան Սրբազանի յեղափոխութեամբ հետաքրքրուելու ուրիշ եկեղեցականներու իր օրինակ պէտք էր ցոյց տալ. Պոստի նախկին Խաւֆեանը, իբր թէ հայերը կրօնականներէ ազատագրելու բանդագուշանքէն մղուած է, մինչ ամենէն լուսաւորող երկիրները, Ֆրանսան իսկ, կրօնաւորներու ազդեցութենէն ազատ չեն մնար. Հնչակեան մի քանի անդամներու դէմ իր սնուցած յիսկալութեանը լոկ յազուրդ տալու մտադրաւ, վառման հոգ չընէր որ իր այդ ընթացքով Դաշնակցութեան Ամերիկայի մէջ ունեցած ազդեցութիւնը պիտի ոչնչացնէ. Սակայն Դաշնակցութեան աւելի լրջամիտ ու հայրենասէր անդամները պէտք չէ աւելի երկար ատեն ձգեն որ անձ մը ահագին կուսակցութիւն մը իր յիսկալութեանը զոհէ: Արդի տրի խնդրոյն առած դարձուածները պէտք է զիրենք վերջնապէս համոզէ որ ուղիղ գիծը միշտ է՝ կարծն է, Դաշնակցութիւնը անգամ մը բաղդախնդիր իւսիֆեանի (վառմանի) ու քրիստոնէի Հրանդի ցանցերուն մէջ պրկուած կը նախընտրէ այդ սխալ շաղիւղի մէջ յամառաբար ընթանալու քաղաքականութիւնը. հետեւանքը Դաշնակցութեան համար տխուր պիտի ըլլար. Ա. Ի. Բ. Ի. Գ. Ի տեղեկագիրներով հիւսուած կեղծաբարութիւնը Արդիարին պէս ըսկեպտիկի մը ոչ մէկ կերպով վերնասել, ու վերջերս Ուստր գումարուած Համաժողովը ցոյց տուաւ որ հայ ժողովուրդը իր ներկայ տագնապալի կացութեանը մէջ այդպիսի կատակներու շատ

տրամադիր չէ: Հնչ. վեր. կուսակցութեան հիմերը կարծաւածէն նուազ խախտու էին քանի մը ան. ձերու զրպարտանքէն մնասցուելու համար: Այսօր նոր ապացոյց մ'աւելուեցաւ թէ Դաշնակցութեան անդամներէ ոմանք, մինչեւ հիմա ուրիշներ անիրաւաբար զրպարտելէ անպատիժ մնացած, որպիսի քրտմնելի եղեռնագործութեանց կը դիմեն, Դաշնակցութիւնը իրենց գործիք բնելով, անձնական սխեր կարգադրելու համար «Շարժում» խմբագիրը վարդօն առլի օրը անուն մրտախու սպառնալիք մը ընելու չափ ծիծաղելի կը գտնուէր. — «Եթէ ուղիւ, չը կարծես որ քու ալ վրադ բան մը չ'մ կրնար հանել: — Ես գիտեմ բռնելիք ընթացքս: — Վա՛յ, շատ լաւ, պիտի տեսնաս ինչ մուր քու դէմքդ պիտի քսեմ: — Կրնաք ընել: — Ես չեմ ընել անձամբ, բայց ուրիշներուն ընել կուտամ:» Ձիւցալցող կէտը վարդօյին սպառնալիքը չէ, սա գերազանց պատճառաւ որ մինչեւ հիմա ոչ մէկ յեղափոխական գործով զբաղած չըլլալու, անուն մը չուեցաւ որ մարդէ վախ ունենամ, ու դժբաղդապէս ինչ որ ալ վարդօն ընէ, մատնչութեամբ զիս չպիտի կրնայ ամբաստանել, քանի որ ոչ մէկ յեղափոխական կուսակցութեան չեմ անդամակցած ու չեմ անդամակցիր. ինչ որ զիս կը սարսուցնէ այն համարձակութիւնն է որով վառմանի, վարդօյի պէս անձեր Դաշնակցութեան ներողամտութեանը վրայ վստահ կը շարունակեն դեռ իրենց հակակարծիք գտնուողները զրպարտել: Մատնութեամբ ամբաստանեցին Արդիարը, Ճըգնաւորեանը, Արզուեանը, ուրիշ շատեր, ու անպատիժ մնացին. իրենց դերին մէջ կը գտնուին, իրենց յաջողութեանը միակ առհաստատ հայն է այդ. ինչ ապիւծ ծառայութիւն մը իրենց կուսակցութեան մատուցած պիտի ըլլայ. ինչ Դաշնակցութեան այն անդամները, որոնք գիտնալով հանդերձ վառմանի, վարդօյի որ տեսակէն յեղափոխական ըլլալին, դեռ կը յարատեւեն իրենց լուսթեանը մէջ: Քանի մը հոգիներու արտաքսմամբ, Դաշնակցութիւնը որ մեր դատը Եւրոպայի ճանչցուեցաւ համար գնահատելի քայլեր կառնէ, պիտի ապատի իր վարկը կորստանքէ, ու այն ատեն յեղ. կուսակցութեանց միացման խնդիրն ալ նուազ կ'ընտոս պիտի ըլլայ: Ինչ կարելի է սպասել յեղափոխականէ մը որ դեռ երէկ իրեն անձանթով երիտասարդի մը կըսէ: «Ես անձանթ քոռ անուանը չեմ տրտնար, բայց ուրիշներուն ընդկոտաւ»: (*)

Տ. ԷԼԱՍԱՅԱՆ

(*) Վարդօյի այս խօսքը իր բուն ոգւոյն արտացոլացումն է, մտնել, սեւեցնել:

Ի. Խ.

ՄԵՐԿԱՑՈՒՄ

Վառնայի մէջ մատի վրայ համ. բուռը Դաշնակցականներու, աւելի ճիշդը «Շարժում» ակններու, վերջին խեղճատակութիւնները անշուշտ հայ հասարակութիւնը տալակուանքի մէջ ձգեց. մանաւանդ թէ տեղական թերթերն ալ դէպքերը պէտք եղածին պէս չի բացատրեցին: Ես հետամուտ եղայ այս կատակերգութեան դէպքապատճառը հասկնալու. ուստի կը փութամ մինչեւ ցարդ քաղած տեղեկութիւններուս եզրակացութիւնը քանի մը տողով բացատրել «Իրաւունք»-ի միջոցաւ:

Արդէն շատեր գիտեն թէ Շարժում իր գոյութեան առաջին օրէ. բուն մէջ ինքզինք անկողմնակալ և կուսակցականութենէ հեռի հըռչակած ըլլալուն հակառակ, Դաշնակցութեան ներկայացուցիչ վարդօյի օրկանն էր և այդ թերթը հանելու համար դրամագոյիւր վարդօն ինք հայթայթած էր կուսակցութեան տեղական կոմիտէի սնտուկէն, զոր ուղած ձեւով վը գործածելու բացարձակ իրաւունքը կը վայելէր: Եւ իրօք ալ «Շարժում»-ի հրատարակուելէն շուրջ տարի մը վերջ, վարդօն Դաշնակցութեան ընդհանուր ժողովին ներկայացուց «Շարժում»ը հիմնելու համար ծախսած դրամին կրկնապատիկ հաշիւը: Բայց կողմաս գումարուող այդ ընդհանուր ժողովին մէջ գտնուեցան անկեղծ և ուղղամիտ Դաշնակցականներ, որոնք մերժեցին ընդունիլ «Շարժում»ին համար վարդօյին ցոյց տուած ծախքը, որուն գումարը 1500 ֆրանքի մօտ էր: Այս ծախքը մերժուելուն պատճառաւ, վարդօն անձնապէս պարտական եղաւ այդ գումարը Դաշնակցութեան. բայց ուրկէ պիտի վը ճարէր. . . .

Հետզհետէ այդ թերթի կրած բարոյական անկուսկները և ուրիշ թերթերու միջոցաւ եղած հրապարակային մերկացումները «Շարժում»ը բերին այն վիճակին հասցուցին որ, ալ իր առօրեայ ծախքը գոցելու անկարող գտնուելով, հըրապարակէն նորանոր փոխառութիւններու ալ դիմել ստիպուեցաւ: Խմբագիր վարդօն իր թերթը միայն 350 օրինակ տպել սկսած էր, — 28 սնտուկի խաչագողութեան և Տիգրանց մասնախումբի խնդիրներէն վերջ —, և այդ 350 օրինակին ալ մէկ կարեւոր մասը ձրիաճարակներու ձրի ցրուելու էր որպէսզի տալիք զինքը պաշտպանեն ժողովուրդի ամեն դասակարգէն պաշկկացող քննադատութեանը դէմ: Սակայն այս ամենը չէին բաւել թերթին բացը գոցելու, որ իւրաքանչիւր ամիս հարկւաւոր ֆրանք կաւենար: Վարդօյին ալ ուրիշ ճար չէր մնացած բայց եթէ թերթը դադարեցնելով Դաշնակցութեան հեռանալու և իրօք ալ իր թերթը երեսէ ձգող ժող

վրդին խել մը հայհոյութիւն տեղացնելով, յայտարարեց թէ վիէննա պիտի երթայ ու «Շարժում»ը հոն պիտի հրատարակէ (.) : Ասինքն թերցող դիրքութիւնը հասկցաւ թէ այս փախուստի ձեւ մըն էր, քանի որ Պուլկարիոյ նման արժան երկրի մը և հոն գաղթականութեան մը մէջ իր ծախքը չի գոցող թերթ մը վիէննայի պէս բազմաթիւ քաղաքի մը մէջ բնակչէր կրնար հրատարակուիլ :

Բայց «Խրաւունք»ի խմբագրին փութկոտ բնաւորութիւնը, որ ամեն բան օրը օրին պատմելու անքաղաքագիտութիւնը ունի, պատճառ եղաւ որ Շարժումը ատող վաշխառու մը, իր մէկ յանձնարարին համար իրաւունքէն հարուածուելուն պատճառաւ, ասոր վրէժխնդիր գազարած «Շարժում»ը վերաբաժնաւ ջանայ, պայմանաւ որ սա զիրենք պաշտպանէ ի հարկին : Այն ողբերգա-զաւեշտախաղը մանրամասնել հարկ չէ, քանի որ շատեր գիտեն թէ ինչպէս «Խրաւունք»ի դէմ դաւեր լարեցին այդ երկուքը դաշնակցելով սուտիկէ սոքթօրին (.) որ քիչ առաջ վաշխառուին հետ կռուի բռնաւորով ազգին 300 ոսկիի վնաս հասուցած էր, և իրաւունքին ալ արդար ապտակին արժանացած :

Բայց «Շարժում»ը վերստին հրատարակելու համար ամէն շաբաթ առաջ դրամ պէտք էր, որ թէ՛ հրապարակի պարտքերը մաքրէ և թէ՛ օրական ծախքերը գոցէ : Զանօթ վաշխառուն «գարբիսի» մը համար միայն փոխ դրամ կրնար տալ, բայց այդ ալ ապահովել պէտք էր, որպէս զի վերջը կտրի նայ գանձի :

Ինքնակոչ գաղափարական—խըմբազիրը վաշխառուին թեւին

(.) Զարեկը չարագործութեան համար միայն իրարու կը դաշնակցին : Մ. Խմբ.

տակ մտնելու գիշտ, շողամարտի դերը ստանձնած էր, և կը յուսար «Խրաւունք»ը խափանելով, ժողովուրդին բռնի «Շարժում» կարգաւ տալ : Անշուշտ այդ ժողովուրդը ապուշ չէր և կը տեսնէր թէ «Շարժում»ի մէջ «գնչուներ» մակդիրով որակողը այդ թերթին տէրը եղած էր այս անգամ : Ուստի այս նոր տէրին ալ ամէն ստորջրեքիւր ապարդիւն մտային, ժողովուրդը «Շարժում»ը բնաւ չի կարգաւ սկսեց, անոր Սարգիսին վեքրոնապր անունը տալով և «Խրաւունք» հրատարակուեցաւ ըստ առաջնոյն և աւելի ապահովութեամբ վիճակի մը մէջ : Այդ շատ «գործնական» վաշխառուն նոր ճար մըն ալ խորհեցաւ. «Յուսումնամ» անունով խեղճ թուղթի կտոր մըն ալ թուրքերէն հրատարակելու և «Շարժում»ի բաժանորդաց ձրի բռնի տեղի : Սակայն ասոր ալ արդիւնք եղաւ ծախքի բարդում մը իր ուղի բացին վրայ, կարծեմ, «Խրաւունք»էն ընթերցող մը իսկ առանց կարինալ խելու :

Բայց ծախքերը չեն դադարի և պարտապահանջները հրապարակին մէջ պոռուցուեցին սկսած էին : վաշխառուին սնտուկն ալ վազը քանդուեց չէր բնականաբար : արբուածին տեղը չէր գար : նոր միջոց մը, նոր ճար մը փնտռել պէտք էր : Եւ գեղեցիկ օր մը հերոս—խմբագիրը (քիչ մնաց խօսող պիտի գրէի) վաշխառուին հետ գըլուխ գլխի տուած, երկուքին միարեւան «ճարը գտանք» բացաւ գանչեցին :

Այդ գտնուած «ճարը» յեղափոխութեան անունով, սպառնալիքի տակ, դրամ հաւաքին էր : որով կերակակայէին, թէ՛ վարդօրին Դաշնակցութեան ունեցած պարտքը և թէ՛ վաշխառուին և այլոց կուտակուած հաշիւները մաքրել : խեղկատակութիւնը ճիշդ այս ձեռնարկին մէջ կսկսի, որ վիճեցաւ՝ այնչափ զաւեշտական ու միանգամայն ողբերգական տեսարաններ

պարզելով, որոնց նկարագրութիւնը այս անգամուան համար երկար պիտի ըլլայ : ուստի երկրորդով կը խոստանամ ընել :

Ունկնդիր

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կաշկածայէ (Հնդկաստան) թղթակից մը «Մուսկէթ»ի կը հաղորդէ ցաւօք սրտի թէ՛ Կարապետ Պաղտասար անուն մեծահարուստ հայը 62 տարեկան հասակին մէջ մեռած է : «Հանգուցեալը կըսէ, իր հայրենասիրութեամբ և գթասրտութեամբ հոգակաւոր է : Ձեր ընթերցողը մոռցած ըլլալու չեն թէ նա իր ծախքով կանգնել տուած է : Ռանկօնի մէջ, վերթթորիա թագուհին, Հնդկաստանի կայսրուհին մէկ ձիաւոր արձանը : Հանգուցեալը 50,000,000 ֆրանքի հարստութիւն մը կը ձգէ : »

Մենք չենք յիշեր թէ հանգուցեալ միջիօնատէրը իրեն հայ իր հայրենաւիրութիւնը ապացուցանող ինչ բարեգործութիւն ըրած է ազգին : Եթէ Տիար Ձերազ իր Մուսկէթի հին թիւերուն մէջ աղյուսակն յիշատակութիւն մը ունէր, փափաքելի էր որ պզտիկ ծանօթութիւն մը տար : Եթէ ոչ 50 միլիոն հարստութիւն ունեցող հայ մը Անգլիոյ թագուհիին արձան մը կանգնեցնուի և յոյնիսկ օտարներու միայն նպաստած ըլլալով ոչ մի հայու սիրտ չի կրնար գէպի իր յիշատակը գրաւել, այլ ընդհակառակը :

«Հնչակ»ի ներկայ տարւոյ երրորդ թիւի նուիրատուութեանց բաժնին մէջ կը կարդանք թէ՛ Բաւնուր Մասնաճիւղի 1899 ի հաշուեկշիւոյն մուտքի ընդհանուր գումարը 4820 ռուպլի 42 կոպէկ է : Այդ գումարէն նախկին կեդրոնի զրկուելէ 500 ռուպլի, ներկայ կեդրոնին 1172 ռուպլի 6 կոպէկ տեղակաւ և կուտակեցական ընդհանուր ծախքերու յաւակցուելէ 2611 ռուպլի 77 կոպէկ : Իսկ դրամարկիւն մէջ 1900 տարւոյ համար կը մնայ եղեր միայն 536 ռուպլի և 59 կոպէկ : Մուտքը ելքին հաւասար է, շատ լաւ : Բայց մարդ չուզիլով կը հետաքրքրուի մտածելով թէ Հնչակեան մասնաճիւղ մը ինչ բաներու ծախսած կրնայ ըլլալ 2611 ռուպլի (չուրջ 75000 Ֆր.) ոչ-աննշան գումարը, 1899 թուականին, ուր այդ հին Հնչակեան կուտակցութիւնը կենդանութեան նշոյլ անգամ ցոյց չէր տար : Արդեօք ինքզինք մոռած ձեռագրեցով, խորամանկութեամբ

պատրաստութիւններով դրաղած էր : Երանի թէ այսպէս ըլլար :

—Թուրք թերթ մը կը գրէ եղեր թէ կրթական նախարարութիւնը որոշած է հակողութիւն ի դրո՞ղ զնել թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառներու քրիստոնեայ ժողովրդոց դպրոցներու երևումը տական մատակարարութեան վրայ : Այս որոշման պատճառ սա ցոյց կը տրուի թէ՛ երբ նուագահանգէս, թատերական ներկայացում և այլն կը տրուին ի նպաստ վարժարաններու հասցնելու : մեծ մասը անհասանիրոց գրպանը կը մտնէ : Այդ անկանոնութեանց առաջին անգամը համար վարժարանաց տնօրէնները պարտաւոր պիտի ըլլան ամէն տարի կրթական նախարարութեան ներկայացնել իրենց պէտքերը ու դրամական կացութիւնը ցոյց տուող գրութիւն մը : Գաւառներու մէջ դպրոցներու ի նպաստ հանդէսներ կազմակերպելու արտօնութիւն պիտի չի տրուի եթէ հայ Ազգ. իշխանութիւններ պաշտօնապէս հաստատեն անոնց անհրաժեշտ պէտքեր :

Այս տեսակ որոշում մ'եթէ գործադրութեան դրուած է, դժուարութիւններէ զատ կաշառակերութեան նսր դուռ մըն ալ կը բանայ, և նորագոյն ունեցողութիւն մը կը լրջալ ազգային կալուածներու ներքին մատակարարութեանց մէջ : Ինչ որ հակառակ է Ազգ. Սահմանադրութեան հիմնական սկզբունքներուն :

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Խրաւունք»ի 23 թիւին մէջ յօդուած մը կարդացինք, որուն տակ կ'ստորագրէին Պաղտասար Յովհաննէսեան, վանցի, Այդ պարոնը յայտնի կազմակերպութեան մը երկու անդամները դատարկաշըլիկ անուանած ու դատապարտած էր անոնց դրամ հանգանակելը, ինքզինք ժողովուրդի հարազատ գաւազդ և անոր շահերուն անկեղծ պաշտպանը հանդիսանալով : Արդ, այդ անձը լաւ մը ճանչնալու դժբաղդութիւնն աւեհնալով և չուզելով ժողովուրդն ու մամուլը դրաղեցնել իրմով և իրեն գրուածքովը, կառավարկեմ Պ. Պաղտասարին հրաւիրել իր յօդուածը տպագրող խմբագրին, ըր, նոյնպէս Շարժումի խմբագիր :

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՆԵՐ [61]

(ՊԱՏԿԵՐ ՄԸ ՏԱՀԱՎԱԶԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

Իր գերբնուցող մէղստով, երեք տարուան մէջ, «Զօլախ—Զալուշ»ը մտաւոր գեղեցիկ պաշարով մը, ու առողջ գոտողութիւնով, լաւ թրքագէտ մը կը դառնայ : Աս անմոռանալի աննման բարեբարի դիւանաւոր, Տէր Վահանի պէս, «Զօլախ չափուշ»ն ալ ծոռնիկ չորած, գառնապէս կուլար, ու արդար զայրոյթով մը կանխէր կարմիր գաղանը, որ իր մարդատեսաց մոլեգնութիւնով հանրութեան այնքան օգտակար, աս տեսակ ազգիւ ու վեհագի կտրեճեալու արեւը կը մարէր :

Տէր Վահանի վերջին բոթաբեր նամակը, շուտով իր տեղը հասցնելու համար, մեծ հոգ կը տանի Զօլախ չափուշը, ու կըրտուգէ որ Ուլունձորոյ կողմը Եւզեմբորդ տէրվիչ մը կայ եղեր : անոր հետ առանձին կը տեսնուի, ու Տէր Վահանի գոց նամակը, անոր յանձնելով, մագաղաթի անուան ու դէրվիշեբուն փերի վրայ երգում ընել կուտայ : ու, ան նամակը անկորուստ ֆ. գեղը հասցնէ : Դէրվիչ Ուլունձոր իբր գրական մարդ իր խօսքը կը պահէ, ու նոյն նամակի թուականէն մէկ ամիս վերջ, ինքն անձամբ Տէր Վահանի գեղը կը տանի զայն :

Դէրվիչ Ուլունձոր, ևս հոն ըսելով ու իր Բեշուլը ամեն անցնողի ու նստողի առիւն երկնցնելով, կիրակի օր մը. ցորեկուան ան պահուն որ ֆ. գեղը հայրենիք կիրակնօրեայ հասարակական դասարան լարանով զբաղուած էին, նոյն գիշը կը մտնէ : ու շիտակ գեղապետի տունը դիմելով, հոն կըսպասէ, մինչեւ որ Պ. դիւղապետը, Մանուէլի հետ «Համերայնութեան» ժողովէն ու գեղական լսարանէն կը վերադառնան :

Դէրվիչ—Ուլունձոր, իր ստոյլի փերիսփայլութեան ստանապարտութիւնով երբեք զգացնել չի տար որ, իր ծոցը եղած բոթաբեր նամակի պարունակութեան ինքը տեղեկութիւն ունի : Քանի մը սովորական խօսքերէ ետք, իր բժժանքներու մէջէն ան նամակը հանելով, գեղապետին կուտայ : Ու գիւղապետը վրայի հասցէին անմիջապէս Տէր Վահանին գրուած ըլլալը կուհեղուստ սրտի տարապաշտան անձկութիւնով ինքն ալ Մանուէլին կ'երկնցնէ զայն, ու կը խնդրէ որ, շուտով մը բարձր ձայնով կարդայ անոր պարունակութիւնը :

Մանուէլ—Մամիկոնեանը, զողորմուն մատներով կը բանայ ան սեւ թղթիկը : հազիւ մէկ երկու տող կը կարգայ, իր աչքերը կը մթագնին, աքցուներն ու հեկեկանքը իրարու խորունկութիւն կը խեղդեն իր ձայնը որ, զոռալ կուգէ ու զգացած վիշտի սաստկութեան իր հազակի մէջ կը կերկերի :

Փ. գեղի երախտագէտ ժողովուրդը՝ քառասուն օր, ընդհանուր սուգ կը բռնէ թախճաքին : Ու իր հայրենազոհ աննման վարժապետի յիշատակը յաւերժացնելու համար հոգեհանգստեան մեծ ու փառաւոր արարողութիւնով մը անոր առան նուիրուած կոթողաձեւ խաչարձան մը կը կանգնէ Ս :

Ատովմեանց վարժարանի սիրուն դարաստանի մէջ, ուր ա'յնքան արդիւնաւոր աշխատութիւններով ու եռանդով անցուցած էր Գուրգէն իր երիտասարդական տմենէն աւելնող օրերը, ու իրենց գիւղական կեանքի բարբորութեան ու ազգային ապագայ վերածնութեան համար չէր խնայած նոյն իսկ իր թանկագին կեանքը :

ԾԹ

Սասնոյ ահաւելի կոտորածը և կողոպուտը, թիւրք «պաշիպօղուք» կառավարութեան կանխապատրաստութիւնով գործադրուած էր : Աս եղևուն ու նախճիրը, կէտ առ կէտ գործադրող Պիթիսի տխրահոգի կուսակալը, Հասան Թահսին փաշան, իր փառաւորութեան գաղաթնակէտը բարձրացած, Երլաղի բորիանէն պատուանշաններով ու «Ֆէրման» ներով վարձատրուած էր : Տակաւին ատ քառմեկնցողի իրողութիւններն ու թրքական արեւմտորութեանց իսկական նկարագիրը դուրս չէր պոռթկացած :

Ղ. Պ. Նահապետեան

(Շարունակելի)

ընդ և քանի մը չէզոք մարդիկ ու զինք քանի մը վկաններով, որպէս զի այդ յանձնարարութիւնը մէջ որոշուի թէ ինչ է վանքի Պաշտիկ մը և որչափ կարողութիւն ունի հասկնալու մեր ազատագրութեան գործը, որուն ջերմ պաշտպանը կուզէ հանդիսանալ:

Գաղափար Պողոսեան վանքի Յ. Գ. Ներքապէն մէկ մէկ օրի. նակ ալ Շարժումին և Հայկիին զրկուած է տպագրութեամբ:

Ծանօթ. Խմբ. — Պ. Պաղատասարի ինչ ըլլալը մենք ճանչնալու պէտքը չունինք, քանի որ արդէն գիտենք թէ ինք համեստ եւ սրտոտ արհեստաւոր մըն է, որ իրեն միջոցներուն ներքառ չափովը յեղափոխական գործունէութիւն մը ունեցած է. նա այսօր վառնայի մէջ ունի իր բազմաթիւ դաղափարակիցները:

Մենք անոր նամակի մէկ քանի կէտերուն թէն. համակարծիք չենք, բայց զայն նշանակեալ հրատարակել ցինք, իբրեւ արձագանքը ժողովրդական դատարարի մը դատողութեանը:

Տեղա հրատարակուող «Իրթոյնի Գրայի» անուն Պուլկար թերթի վերջին թուին մէջ, Մակեդոնական Ընկերութեան տեղոյս Մասնաճիւղին կողմէ պաշտօնական նամակ մը և խմբագրական գիտողութիւն մը հրատարակուած է, որ բուն զբաղ պահանջող հայերու և օտարազգիներու ընթացքը «ուսականութիւն» մակդիրով կը մկրտէ. Մեր յառաջիկայ թուով թէ նամակը և թէ խմբագրական գիտողութիւնը նոյնութեամբ պիտի արտատպենք:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼ ԻԹԻԳԻՅԷ



ԹԻՒՐԻՒՄ

Տիրապէս Վիլայէթին տէ Միլի, Շեմիր վէ Գարա Գէշի աշիրէթի պէնինտէ գաղկալար վէ մուգաթէլէ վուգու պուլմագտա օլտըղընտան, խալլը գաղալար խալլալ վէ էհալի բէրիշան օլուպ, հիւքիւմէթ տախի գաղթալ մուաֆ ֆագ օլամատը, Պու տէֆա Տիրապէս Վիլայի խալլի պէյ մէղքիւր աշիրէթի սուլ ռ թէսքին իթ մէք իշիւն տէվրէ չըգմըլ օլտըղը թիւրք կաղէթալարը եւադիօր:

— Սէլանիք իսթինաֆ մահքէմէ սի եէնիտէն պաղը պուլկարլարըն մուհաքքէմէսին, պաշլայաճագ ը մըլ, Հէյյէթի իթհամիյէ (ամրատ տանիչ ատեան) պաղըլարըն մէնի մուհաքքէմէսին գարար վերմիլ:

— Պուլտան էվէլ Սէլանիք տէ մահքիւմ օլան Պուլկարլարտան 13 քիշի Սթանպուլ նազլ օլունուպ մերքէզի հապսանէյէ աթըլըլար:

— Սուէզ պողաղընտան կէչէն թիւրք ասքէրլէրի իշիւն գուլման եւ թարաֆընտան օնար ֆրանք վերկի ալըմասընտան տօլայըլ թիւրք տէվէթի Մըսըրտաքի

մահքէմէյի Մուլթէլիֆէ հուգուրն տա Սուէզ գուլմանեարնա գար չը տապա աշաճագ տըր:

ՄԱԿԵՒՈՆԻԱ

Մանասթըրտա Սթալօրո նամ Պուլկար փափաղընը էօլտիւրմէք վէ Մաքթիթիւ գոմիթէսինէ մէն սուպ օլմագ թէօհմէթի իլէ թուհիլը մուհաքքէմէյէ ալընան 18 Պուլկարլարըն մուհաքքէմէսի իճրա օլունուպ, Թուրքա Նամ քի մէսնէ իտում, Բիլգօ Բէթլօ վէ Բիլգէրօ էպէտի հապսա՝ Երեկի Նայտօ, Թրիֆոն, Տէմէտը, Կր րուէֆ վէ Թէնտոր Լուքանօֆ 10 սէնէ՝ Եանաքի իլէ խանճը Նալէ 3 սէնէ, Սթէֆան վէ Սթանէլ նամ մուլթիլէր իքիշէր սէնէ հապսա մահքիւմ օլմուշար տըր, Պուլկար տան մաատա 5 քիշիլէրինտէ պէ րաաթընա գարար վէրիլմիշ տիւր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Աճէմ Շահը՝ Սոֆիա Բօլիս միւ տիւրի Մ. Պասաճիլէֆէ վէ խարի ճիյէ մէմուրլարընտան Մ. վէրնաց ցալա Շիբի խուրշիտ նիշանընը իքիճի սընքիւնտան պիւրէր առէտ իհտա իթմիշ տիւր:

— Բուս մուհարրի Մ. Անֆի թէաթրօֆ Զէլա. Բրէնա Զէրտի նանտ հաղթէթլէրի իլէ միւլազա թընտա, Բրէնա Մաքթիթիւ գո միթէսինտէն տօլայը խոշնուտըլ լըզ կէօսթէրմիշ, վէ վիւքէլա բէի սի Մ. Գարապէլօֆ Էմիլիէթի բնամէլէսի օլտըղըն պէյանլէ, գա պինէնիս մուլթէլիֆ րարթիլէր տէն թէչէիլ օլընմըլ օլմասը իլէ պէրապէր, ուղուն միւտտէթ իթ թիֆապէ տէվամ իտէպիլէճէկինի սէօլլէմիշ, Զագաթ մալիյէ ճիհէ թինտէ, պիւտտէտէն պէօլիւք պիւր մէպաղ թէնգիլի միւլքիւնիւգ տէ միշ տիւր:

ՅՐԱՆՍԱ

Մարսիլիտա թաթիլի մէշղու լիյէթ իթմիշ օլան իշիլէրտէն իս քէլէ վէ թէրսհանէ ամէլէրի սալը կիւնիւ իշէ միւպաշէրէթ իթմէք իշիւն գարար վէրմիշէր:

— Յրանսա վիւքէլա բէրիսի Մ. վալտէք Բուսօնըն խաթալըգտան սըհհէթ պուլմագտա օլտըղըն թէլէկրաֆ պիւտէրմիշ տիւր:

— Վարօրլարտան Մարսիլիա ի լիմանընա քէօմիւր չըգարան իշիլ լէր սալը կիւնիւ իշէ պաշլամըլ տըրլար:

— Յրանսա ճուհուրիլէթ բէրիսի Մ. Լուպէ տէվրէ չըգմըլ օլուպ, Նիստէ Ժիմիսթիք եարըլընտա հաղըր պուլընմըլ վէ պիւր նութգ լէ պէյանը մէմուլիլէթ իթմիշ տիւր:

ԲՈՒՍԻԱ

Չարըն պիւր իշապըր իւզրէ Ժէ նէրալ վանուքի մէարիֆ նաղըրը թալիս օլընտը: Մէղքիւր իշապ զըն միւտէրիճաթընա կէօրէ,

սօն պիւր գաշ սէնէ զարֆընտա պիւր չօգ եանըլըգլար վուգու պուլմուշ օլմաղլէ, Չար պիւլաթէ էիւր մէթէպլէրին իսահաթընա միւպաշէրէթ օլընմասընը էմր իթ միշ տիւր: Չարըն իսահաթ կէօս թէրտիլի չու արզու, չու սօն ալտա թալէպէնի (ուստնոդը) իս թիւալ չըգարմասընը սէմէրէսի օլմագ տըր:

— Բիթիւրպուրկտան ալաֆրան կա ապրիլ 5 թարիլի պիւր թէլէկ րաֆ Չարպհանէնի եանմըլ օլտը զընը պիւտիւրիօր:

ՍԵՐՊԻԱ

Գրալ Ալէքսանտր Բուս պատրի արքընա Գարապուշ Նիշանընը պէօլիւք խաչընը իհտա իթմիշ տիւր:

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Բաուլմանտան նասպ օլընան գոմիսիօնը մախսուս գրալ էտվարդ վէ ֆուլիւսաը իշիւն սէնէվի 67000 լիւրա թախսիս իտիլմէսինի թէք լիֆ իթմիշ տիւր:

ՉԻՆ

Մանչուրիանըն Բուսլարըն գապ թըլ ալթընա կիւրմէսինէ գարըլ Ճաբնիա տէօվէթի Բիթիւրպուր կա պիւր բրօթէսթնամէ կէօնտէր միշ օլտուղընը էվէլէթի նուստէ միգտէ եաշմըլտըր: Բուսիա Ճա. բօնըն բրօթէսթինէ պիւր ճէվապ վէրմիշ իստէ, պու ճէվապ Ճա. բօնիա թարաֆընտան քեաֆի կէօ. բիւլմէտիկիւնտէն, Տէյիլի Մէյիլի ալտըղը մալիւմաթա պինսէն Ճա. բօնիա իւլթիւմաթօմ եօլու պիւր քաշ մուհսսիթ թէքիլէր Բուսիա յա իտէճէք իսիշ:

— Բիթիւրպուրկտան վէրիլէն պիւր թէլէկրաֆ պիւտիւրիօրքի էճ նէպի տէօվէթլէրին նէղտինտէ պուլունան Բուս էլիլէրինէ վէրիլէն էմիւր իւզրէ, պուլար Բուսիա նըն Չին իլէ Մանչուրիա իշիւն խուսուսի ահտնամէ թանգիլ իթ մէք իտաաաաաաաա վազ կէշմիշ օլտըղըն տէօվէթլէրէ պիւտիլէ ճէքլէր:

Պու հապաաա Բուսիանըն զօր կէօրտիկիւնտէ թէպիլիւնտէն էլ չէտիկիւնի կէօսթէրիօր:

— Բէքինտէն վէրիլէն պիւր թէլէկրաֆ կէօրէ, սուլհ միւլքէք բէսի իշիւն թալիս օլընան Չինի մուրախալար, միւլթէհիմ Չին մէմուրլարըն ճէգալանմասը իշիւն, էճնէպի էլիլէրտէն իպաղ օլընան իսթալը գապուլ իթմիշէր. մէզ քիւր լիսթաաա իսթիլէրի եաղըլ մըլ օլան միւլմիլէր 242 միսիօնէր, զէվէ վէ էպաաաա իլէ պէրապէր, գաթլ իթմիշ օլմագ ճիւրմի իլէ միւլթէհիմ տիւրլէր:

— Մարէշալ վալտէրզէ Չինտէն Ալման իմքէրաթօրընա պիւր թէլէկրաֆ վէրմէքլէ, միւսալէհէ միւլ գէքէրէսինէ կիւն լվէլ Նիհայէթ վէրիլմէսինի բէճա իտուպ, ասքէր լէրին կէրի չաղըրըմասընը իգ թիւրաաաա կէօսթէրմիշ, զիւրա

պուլար պէյնինտէ տէհէթլի գարըլըգլըգ չըգաճաղընտան գօր գուլմագտա իմըլ:

— Մանչուրիաա Բուս աաքէրլէրի վէ պիւր քաշ պին չիլիլէր պէլ նինտէ միւտարէպէ վուգու պուլուպ Բուսլարտան պիւր գաշը եարալան մըլ վէ էօլմիւշ. Չինիլէր իսէ պէօլիւք թէլէֆիլաթ վէրմիշ օլ մաղլէ չիմալա տօղրու գաշմըլար տըլ:

— Գէզա Թիլէնձիին չիմալ ճի հէթինտէ Ալման աաքէրի Չինիլ չէթէլէրլէ վուրուլմուշ. պուլար տան 20 քիշի էօլմիւշ, վէ Ալման լար պիւր թօր վէ 29 արապա զապթ իթմիշէր:

Բէքինտէն ալընան սօն թէլէկ րաֆ Մօնկուլիտա ըսեան գուհուր իթմիշ օլտըղընը թաաաա իտիօր, պու ըսեանըն թէչիլգէթի Բրէնա թուան վէ թուանկիւսիւնի իմիշ լէր:

ԹՐԱՆՍՎԱՆԱ

Հոլանտաաա Պօրլէրին մէնֆա աթընա իս) է թօրլանմագտա օլուպ պու տէֆա պիւր միլիոն ֆլորին Մ. Գրիւկէրէ եօլանըլմըլ տըլ:

— Մ. Գրիւկէր Մաքնիս մուլ պիւրի իլէ կէօրիւմէսինտէ տէմիշ տիւր. — «Ինկիլիլէր, քէնտի» մէն ֆաաթլարը իշիւն, թալէպ իթիսի կիմիլ իսթիլալիլէթի վէրմէր իտիլէր. զիւրա պիլտէ օնա մուպա պիլ թէվաղըլ վէ ֆէտաքէարլը կէօթէրլէճէք իտիւր. օ հալտէ տէ սուլհ թէմամ օլմագտալ:

— Պօրլէրինտա Պօլթա Լօրա Գիլիլէրի տալիսի սուրէթտէ տար տա պըրագուպ, տէմիլիլարը պօղմագ իշիւն թալիլաթ ալմըլ օլտըղը Բրէթօրիտան պա թէլէկ րաֆ պիւտիլիլմիշ տիւր:

— Ապէրտէնտէն 20 միլ չիմալ ճիհէթինտէ, գոմանտան Շէքէր պիւր թապուր ինկիլիլ սիւվարէսի հապս իթտիւրմիշ:

— Գրօնթաաաա «Թալմըգ»ա եաղըլտըղընա կէօրէ, Ժէնէրալ Պօլթա վէ Տէվէդ վէրտ ճիւրաըն տա պիւրլէշմիշ օլմագլար:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Ալնայ Բինկեան գիւղի բնիկ, 20 տարի առաջ ի Պօլիս և վեր. չին գէպքերէն իտոյ ի Շուվա պանդիտած 34 տարեկան, կար. ճօհասակ, սեւաթոք, սեւաչեւ, թխալէմ և արծուակործ Յակուր Թարուլիս Պոնոյեան անուն աղ. գալիսին ալմ ուր, ողջ կամ մեռած ըլլալը կը հարցուի Պատրի. տըրալանի միջոցաւ Ալնայ առաջ. նորգարանէն, և կը խնդրուի որ իշիւն իմասին տեղեկութիւն ունեցողներ հաճին իմացնել Արթ. Տէր խորէն Գհն. Գիւլիկեանի ի Շուվա:

Отговорникъ Н. Драгулевъ
П. „Взаимность“, Варна.